

Նախորդ դասում մենք ուսումնասիրեցինք՝

- փախստականի կարգավիճակի փրամադրման բացառման պայմանները՝ միջազգային պաշտպանության կարիք չունենալն ու որոշակի արարքների ուժով դրան արժանի չլինելը:

Այս դասում կքննարկենք՝

- փախստականի կարգավիճակի դադարեցման հիմքերը, ինչպես նաև այլ հիմքերով ապաստանի դադարեցումը: Ցուցումներ

Դադարեցման պայմաններ

1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Գ» մասը սահմանում է փախստականի կարգավիճակի դադարեցման հիմքերը, որոնք նույնությամբ արտացոլված են

«Փախստականների և ապաստանի մասին» ՏՏ օրենքի 10-րդ հոդվածում: Այս հիմքերը, ընդհանուր առմամբ, կարելի է բաժանել երկու կատեգորիայի՝ փախստականի անձնական հանգամանքների փոփոխություն և ծագման երկրում հանգամանքների փոփոխություն:

Փախստականի անձնական հանգամանքների փոփոխություն: Այս կատեգորիայի փակ ընկնող դադարեցման պայմանները ենթադրում են, որ անձի գործողությունների կամ որոշման արդյունքում նա այլևս չունի միջազգային պաշտպանության կարիք:

Այս պայմաններից առաջինն է անձի կողմից իր քաղաքացիության երկրի պաշտպանությունը կրկին կամավոր ընդունելը: Նարկ է հաշվի առնել, որ նման գործողությունը պետք է լինի ոչ միայն կամավոր, այլև միտված պաշտպանությունը դիտավորությամբ ընդունելուն: Եթե անձը ստիպված է եղել որոշակի հարցով դիմել իր քաղաքացիության երկրին (օրինակ՝ ամուսնալուծություն ձևակերպելու կամ ծննդյան վկայականի կրկնօրինակ ստանալու համար դիմել է այդ երկրի հյուպատոսարան), սա չի կարող մեկնաբանվել որպես պաշտպանություն ընդունելուն միտված կամավոր գործողություն: Մակայն, օրինակ, փախստականի կողմից անձնագրի երկարացումը կամ նոր անձնագրի ստացումը կհամարվի քաղաքացիության երկրի պաշտպանության կամավոր ընդունում: Նույնիսկ իր քաղաքացիության երկիր այդ երկրի անձնագրով կամ այլ ճամփորդական փաստաթղթով այցելելը, որպես կանոն, կհամարվի դրա պաշտպանության կամավոր ընդունում, քանի որ ենթադրում է, որ անձն այլևս այդ երկրում հետապնդումների երկյուղ չունի: Մակայն եթե այդպիսի այցը պայմանավորված է, օրինակ, մահամերձ ծնողին այցելելու անհրաժեշտությամբ, այն չի համարվի դադարեցման հիմք, քանի որ անձը հետապնդումների երկյուղ ունենալով էլ կարող է դիմել նման քայլի:

Փախստականի կողմից ծագման երկրում կամավոր վերահաստատվելը նրա կարգավիճակի դադարեցման հիմք է, քանի որ ենթադրում է, որ անձն այլևս այդ երկրում հետապնդումների երկյուղ չունի: Այս առումով հարկ է հաշվի առնել, որ ապաստանի երկրի կողմից փրված ճամփորդական փաստաթղթով ծագման երկիր կարճաժամկետ այցը, որպես կանոն, չպետք է համարվի և չի համարվի կամավոր վերահաստատում: Վերահաստատումը ենթադրում է փաստացի երկարապես կամ, առնվազն, այնպիսի բնակություն, որի ընթացքում անձն ապրել է «որպես տեղաբնակ», այլ ոչ թե

այցելու (օրինակ՝ աշխատել է, վճարել հարկեր և այլն): Սակայն եթե անձն իր ծագման երկրում ստիպված է լինում երկար մնալ իր կամքից անկախ պարտառենքով (օրինակ՝ կալանավորվելու կամ նմանատիպ պարտառով), դա չի կարող դիտվել կամավոր վերահաստատում:

Ռադարեցման հաջորդ պայմանն է նախկին քաղաքացիության երկրի քաղաքացիությունը կամավոր վերաստանումը: Այս պայմանի առանձնահատկությունն այն է, որ անձը կարող է վերաստանում նախկին քաղաքացիությունը ոչ միայն ակտիվ գործողությունների միջոցով, այլև, օրինակ, չիրաժարվելով քաղաքացիության ինքնաբերաբար շնորհումից, որի մասին նա ակնհայտորեն փորձել է եղել և որը նա կարող էր մերժել (քանի դեռ նման մերժումը հնարավոր չէ, քաղաքացիության ինքնաբերաբար շնորհումը չի կարող դիտվել քաղաքացիության կամավոր վերաստանում):

Փախստականի կողմից ՏՏ կամ որևէ այլ պետության քաղաքացիություն ստանալն ու այդ պետության պաշտպանությունից օգտվելը նույնպես ռադարեցման հիմք է, քանի որ քաղաքացիության պետության պաշտպանությունից օգտվող անձը չունի միջազգային պաշտպանության կարիք: Այս առումով կարևոր է հաշվի առնել, որ **քաղաքացիության ստացումն ինքնաբերաբար չի ենթադրում օգտվել համապատասխան պետության պաշտպանությունից:** Մասնավորապես, անձն ամուսնությամբ ինքնաբերաբար կարող է ստանալ իր ամուսնու կամ կնոջ պետության քաղաքացիություն, սակայն փաստացի չօգտվել այդ պետության պաշտպանությունից (այն է՝ որևէ իրական կապ չունենալ այդ պետության հետ), որի դեպքում փախստականի կարգավիճակը չի ռադարեցվում:

Վերջապես, օրենքը նախատեսում է փախստականի կարգավիճակի ռադարեցում այն դեպքում, երբ անձն անձնական պարտառենքով այլևս չի ցանկանում համարվել փախստական: Թեև այս հիմքն ուղղակիորեն սահմանված չէ Կոնվենցիայով, սակայն ակնհայտ է, որ անձը չի կարող համարվել փախստական, եթե ինքն այլևս չի ցանկանում դա:

Փախստականի ծագման երկրում հանգամանքների փոփոխություն

Կոնվենցիայի ու «Փախստականների և ապաստանի մասին» ՏՏ օրենքի համաձայն՝ անձի միջազգային պաշտպանությունը ռադարեցվում է, եթե իր ծագման (քաղաքացիության կամ վերջին մշտական բնակության) պետությունում դադարում են գոյություն ունենալ այն հանգամանքները, որոնց պարտառով նա ճանաչվել էր փախստական: Սա ենթադրում է ծագման երկրում այնպիսի էական ու կայուն փոփոխություններ, որոնց արդյունքում այդ երկրի ամբողջ փարածքում վերանում է հետապնդումների երկյուղի պարտառ: Ներապնդումների կամ բռնության ժամանակավոր դադարը չի հանգեցնի փախստականի միջազգային պաշտպանության ռադարեցման: Ավելին, սոսկ ֆիզիկական անվտանգության վերականգնումը չի համարվի բավարար, որպեսզի քննարկվող հիմքով ռադարեցվի փախստականի պաշտպանությունը: Անհրաժեշտ է, որ ծագման երկրում լինի գործող պետական և, մասնավորապես, դատական ու իրավապահ համակարգ, ինչպես նաև անձանց ապրուստի ապահովման համար անհրաժեշտ բազային պայմաններ:

Փախստականի ծագման երկրում հանգամանքների փոփոխությունը չպետք է հանգեցնի նրա միջազգային պաշտպանության ռադարեցմանը, եթե նա կարող է ներկայացնել նախկին

հեղափոխումից բխող բավարար հիմնավորումներ իր քաղաքացիության երկրի պաշտպանությունը կամ նախկին բնակության երկիր վերադառնալը մերժելու վերաբերյալ: Այս բացառությունը վերաբերում է այն դեպքերին, երբ փախստականը ենթարկվել է կամ ականաբես է եղել առավել լուրջ հեղափոխումների (օրինակ՝ ենթարկվել է խոշտանգումների կամ, որպես երեխա, ականաբես է եղել իր ծնողների կամ մոտիկ ազգականի սպանությանը) և դրա արդյունքում սրացել է այնպիսի հոգեբանական տրավմա, որի ուժով նրանից ողջամտորեն չի կարող պահանջվել վերադառնալ իր ծագման երկիր: Այս առումով հարկ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ (անձի հեղափոխական դեպքերի բնույթը), այնպես էլ սուբյեկտիվ (համապատասխան դեպքերի ազդեցությունը անձի էմոցիոնալ, հոգեբանական կամ ֆիզիկական վիճակի վրա) հանգամանքները:

Որպես կանոն, կարող են բավականաչափ լուրջ համարվել հեղափոխման այնպիսի դրսևորումները, ինչպիսիք են ցեղասպանությունը, խոշտանգումը կամ դաժան ու անմարդկային վերաբերմունքը, ֆիզիկական բռնության առավել լուրջ դրսևորումները (օրինակ՝ խեղում, բռնաբարություն): Նշանակություն ունի նաև հեղափոխման տևողությունը և դրա համարեքսպր: Սակայն նույնիսկ լուրջ հեղափոխումների փաստն ինքն իրենով չի հիմնավորում վերադարձը մերժելու համար բավարար հիմնավորումների առկայությունը: Անհրաժեշտ է նաև դիտարկել անձի անձնական հանգամանքները՝ տարիքը, սեռը, մշակույթը, սոցիալական փորձը, հոգեբանական առանձնահատկությունները՝ որոշելու համար, թե արդյո՞ք նրա համար իսկապես տրավմատիկ կլինի ծագման երկիր վերադառնալը:

Ապաստանի դադարեցում

«Փախստականների և ապաստանի մասին» ՆՏ օրենքի համաձայն՝ փախստականը կարող է գրկվել Նայաստանի Նանրապետության պաշտպանությունից ոչ միայն բացառման կամ դադարեցման պայմանների առկայության դեպքում, այլև օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և 10-րդ 3-րդ ու 4-րդ մասերով նախատեսված հիմքերով: Ուստի նպատակահարմար է համապատասխան հիմքերը դիտարկել դադարեցման պայմանների հետ մեկտեղ:

Օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը վերաբերում է այն անձանց պաշտպանության դադարեցմանը, ովքեր փախստական են ճանաչվել իրենց ազգականին փախստական ճանաչելու ուժով: Նման դեպքում ազգականների կարգավիճակը աժանցյալ է համապատասխան փախստականի կարգավիճակից և դադարեցվում է վերջինիս կարգավիճակի դադարեցման պահից: Նման դադարեցումը չի ենթադրում փախստականի կարգավիճակի դադարեցման հիմքերի ըստ էության գնահատում և առավելապես կրում է մեխանիկական բնույթ: Միաժամանակ, այդ անձինք նման դադարեցումից անմիջապես հետո կարող են ներկայացնել ապաստանի հայց՝ հիմնվելով իրենց անձնական պարճառների վրա:

Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապաստանը դադարեցվում է, եթե փախստականը մեկնել է Նայաստանի Նանրապետությունից և իրեն տրված **կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի** գործողության ժամկետից հետո գրնվում է Նայաստանի Նանրապետության

տարածքից դուրս: Նարկ է նկատել, որ դադարեցման այս հիմքը ևս չի ենթադրում փախստականի կարգավիճակին անմիջականորեն առնչվող հանգամանքների փոփոխության գնահատում, այլ կիրառվում է մեխանիկորեն՝ պայմանավորված բացառապես օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված պայմանի առկայությամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ապաստանը դադարեցվում է, եթե փախստականը հիմնավոր պարճառներով վրանգավոր է համարվում Նայաստանի Նանրապետության ազգային անվտանգության համար կամ դադարապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար: Այս դրույթը փորձաքննություն փոխկապակցված է նաև օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի հետ, որը սահմանում է **չվերադարձելիության սկզբունքից**, բացառություն այն փախստականի նկատմամբ, որը հիմնավոր պարճառներով վրանգավոր է համարվում Նայաստանի Նանրապետության անվտանգության համար կամ որը, օրինական ուժի մեջ մտնող դատավճռով դադարապարտված լինելով առանձնապես ծանր հանցագործության համար, վրանգ է ներկայացնում հասարակության համար:

Սակայն ապաստանի դադարեցման հիմքերը՝ նախատեսված օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, ավելի լայն են, քան չվերադարձելիության սկզբունքից բացառության հիմքերը, քանի որ առանձնապես ծանր հանցագործության կատարումից բացի ներառում է նաև ծանր հանցագործության կատարումը: Ընդ որում, 1951 թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասը նույնպես խոսում է միայն առանձնապես ծանր հանցագործությունների մասին՝ արդյունքում բացառելով պաշտպանության դադարեցման հնարավորությունը ծանր հանցագործությունների կատարման դեպքում: Նաշվի առնելով կոնվենցիոն նորմերի գերակայությունը օրենքի նորմերի նկատմամբ՝ հարկ է 10-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխան դրույթը մեկնաբանել ու կիրառել այնպես, որ բացառվի ծանր հանցագործություն կատարելու առնչությամբ ապաստանի դադարեցումը հարկապես երբ կան չվերադարձելիության սկզբունքի կիրառման հիմքեր: Ըստ Կոնվենցիայի մեկնաբանությունների՝ առանձնակի ծանր բնույթ չունեցող հանցագործությունների առնչությամբ, որպես կանոն, պետք է կիրառել քրեական և քրեադատարարական սովորական գործընթացներ՝ առանց փախստականի միջազգային պաշտպանության դադարեցման:

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման առնչությամբ ծագող մյուս հարցը վերաբերում է ազգային անվտանգության համար հիմնավոր վրանգի որոշմանը: Սակայն այս հարցն առավել մանրամասն քննարկվելու է չվերադարձելիության սկզբունքի շրջանակներում և, ուստի, այս դասում դրան անդրադառնալը նպատակահարմար չէ:

Այս դասում Ձեզ ներկայացրեցինք՝

- փախստականի կարգավիճակի դադարեցման հիմքերը,
- ազգային անվտանգության համար վրանգի կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար դադարապարտվելու և այլ հիմքերով ապաստանի դադարեցումը:

Նաջորդ դասում կքննարկենք փախստականների պաշտպանության լայն համապրեքսը՝ ուսումնասիրելով, մասնավորապես, ներքին տեղահանված անձինք, ապաքաղաքացիություն, ապաստան եզրույթները:

Դադարեցման պայմաններ (դրույթներ) – 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Գ» մասով սահմանված հանգամանքներ (կապված փախստականի անձնական հանգամանքների փոփոխության կամ ծագման երկրում հանգամանքների փոփոխության հետ), որոնց առկայության դեպքում փախստականի կարգավիճակը ենթակա է դադարեցման:

Քաղաքացիության պետության պաշտպանություն – քաղաքացիության պետության պաշտպանությունը նշանակում է այնպիսի կապ պետության ու քաղաքացու միջև, որի շրջանակներում, ի լրումն քաղաքացիության ֆորմալ առկայությանը, պետությունը փաստացի իրականացնում է կամ, ըստ անհրաժեշտության, պատրաստակամ է իրականացնել իր քաղաքացու հյուպատոսական պաշտպանություն, կամ այլ կիրառելի եղանակով պաշտպանել նրա իրավունքներն ու օրինական շահերը:

Ապաստանի դադարեցում – ապաստանի դադարեցումը պետության կողմից ձեռնարկված ակտիվ գործողություն է, որի արդյունքում դադարեցվում է անձին տրամադրված ապաստանը: Այն կարող է տեղի ունենալ ինչպես փախստականի կարգավիճակի դադարեցման հետ մեկտեղ, այնպես էլ այդ կարգավիճակի պահպանմամբ:

Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ – ճամփորդական փաստաթղթեր, որոնք, համաձայն 1951 թ. Կոնվենցիայի 28-րդ հոդվածի, ապաստանի երկրի կողմից տրամադրվում են փախստականներին ներպետական անձնագրի փոխարեն: Նման փաստաթղթերն այլ պետությունների կողմից ճանաչվում են որպես վավեր ճամփորդական փաստաթղթեր:

1. UNHCR Handbook and Guidelines On Procedures and Criteria for Determining Refugee Status under the 1951 Convention and the 1967 Protocol Relating to the Status of Refugees, Reissued Geneva, December 2011, «« 111-139.
2. UNHCR, The Cessation Clauses: Guidelines on their Application, Geneva, April 1999.
3. UNHCR, Guidelines on Exemption Procedures in respect of Cessation Declarations, Division of International Protection, December 2011.
4. UNHCR, Guidelines on International Protection: Cessation of Refugee Status under Article 1C(5) and (6) of the 1951 Convention relating to the Status of Refugees (the “Ceased Circumstances” Clauses), HCR/GIP/03/03, 10 February 2003.
5. Aydin Salahadin Abdulla (C-175/08), Kamil Hasan (C-176/08), Ahmed Adem, Hamrin Mosa Rashi (C-178/08) and Dler Jamal (C-179/08) v Bundesrepublik Deutschland, Judgment of the Court (Grand Chamber) 02.03.2010, European Court Reports 2010 I-01493.
6. Minister for Immigration and Multicultural and Indigenous Affairs v. Qaah of 2004, [2006] HCA 53, 15.11.2006.

1. 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Գ» մասով նախատեսված՝ փախստականի անձնական հանգամանքների փոփոխություն կատարողի փակ ընկնող դադարեցման պայմանները ենթադրում են, որ՝

Ա) Անձն իր գործողությունների արդյունքում այլևս չունի միջազգային պաշտպանության կարիք: – սխալ է: Անձի միջազգային պաշտպանության անհրաժեշտությունը կարող է վերանայ անձի գործողությունների արդյունքում: Սակայն այս պատասխանը լիարժեք չէ, քանի որ նման անհրաժեշտությունը կարող է վերանայ նաև անձի որոշման արդյունքում:

Բ) Անձն իր որոշման արդյունքում այլևս չունի միջազգային պաշտպանության կարիք: – սխալ է: Անձի միջազգային պաշտպանության անհրաժեշտությունը կարող է վերանայ անձի որոշման արդյունքում: Սակայն այս պատասխանը լիարժեք չէ, քանի որ նման անհրաժեշտությունը կարող է վերանայ նաև անձի գործողությունների արդյունքում:

Գ) Անձն իր գործողությունների կամ որոշման արդյունքում այլևս չունի միջազգային պաշտպանության կարիք: – ճիշտ է: Անձի միջազգային պաշտպանության անհրաժեշտությունը կարող է վերանայ ինչպես նրա գործողությունների, այնպես էլ նրա որոշման արդյունքում:

Դ) Անձն իր կամ իր կնոջ/ամուսնու հանգամանքների փոփոխության արդյունքում այլևս չունի միջազգային պաշտպանության կարիք: – սխալ է: Անձի միջազգային պաշտպանության անհրաժեշտությունը կարող է վերանայ բացառապես իր անձնական հանգամանքների փոփոխության դեպքում: Որոշ դեպքերում փախստականի կնոջ/ամուսնու անձնական հանգամանքների փոփոխությունը (օրինակ՝ որոշակի պետության քաղաքացիության սրացում) կարող է հանգեցնել փախստականի հանգամանքների փոփոխության: Սակայն ամեն դեպքում հարկ է գնահատել, թե հարկապես ինչպես են փոփոխվել հարկապես փախստականի հանգամանքները:

2. Փախստականի կարգավիճակի դադարեցման նպատակներով անձը համարվում է իր քաղաքացիության երկրի պաշտպանությունը կրկին կամավոր ընդունած, եթե՝

Ա) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված հարցերով դիմել է իր քաղաքացիության երկրի հյուպատոսարան: – սխալ է: Երբեմն անձը սրիաված է լինում որոշակի հարցով դիմել իր քաղաքացիության երկրի հյուպատոսարան (օրինակ՝ ամուսնալուծություն ձևակերպելու կամ ծննդյան վկայականի կրկնօրինակ սրանալու համար): Նման արարքը չի կարող համարվել կամավոր (քանի որ անձն ըստ էության չունի ողջամիտ այլընտրանք), ինչպես նաև ըստ էության միաված չէ այդ երկրի պաշտպանությունը ընդունելուն:

Բ) Անձն իր միջազգային ճամփորդական փաստաթղթով այցելել է իր քաղաքացիության երկիր: – սխալ է: Ապաստանի երկրի կողմից փակված միջազգային ճամփորդական փաստաթղթով ծագման երկիր այցը չի կարող համարվել այդ երկրի պաշտպանության ընդունում, քանի որ այցի ընթացքում անձը համապատասխան փաստաթղթի հիման վրա օգտվում է միջազգային պաշտպանությունից, այլ ոչ թե քաղաքացիության երկրի պաշտպանությունից:

Գ) Անձը պահպանել է իր քաղաքացիության երկրի անձնագիրը փախստականի կարգավիճակ սրանալուց հետո – սխալ է: Անձի կողմից գործող անձնագիրը պահպանելը ինքնին չի վկայում, որ նա ապավինում է այդ երկրի պահպանությանը: Նման քայլը կարող է պայմանավորված լինել, օրինակ՝

հերազայում քաղաքացիական կացության հետ կապված փաստաթղթերի սրացման անհրաժեշտությամբ:

Դ) Անձը երկարացրել է իր անձնագիրը կամ սրացել է նոր անձնագիր: – ճիշտ է: Անձնագրի երկարացումը կամ նոր անձնագրի սրացումը, որպես կանոն, կհամարվի դրա պաշտպանության կամավոր ընդունում, քանի որ ենթադրում է, որ անձն ապավինում է այդ երկրի պահպանությանը:

3. Անձի կողմից իր քաղաքացիության երկիր այդ երկրի անձնագրով կամ այլ ճամփորդական փաստաթղթով այցելելը չի կհամարվի դրա պաշտպանության կամավոր ընդունում, եթե՝

Ա) Այցը պայմանավորված է քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված հարցով: – սխալ է: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված հարցերով անձը կարող է դիմել իր քաղաքացիության երկրի հյուպատոսարան, և այդ առնչությամբ անհրաժեշտ չէ այցելել իր քաղաքացիության երկիր: Ուստի նման նպատակներով այդ երկիր այցելելը ենթադրում է, որ անձն այլևս այդ երկրում հերապանդումների երկյուղ չունի:

Բ) Այցն ունի կարճապես բնույթ: – սխալ է: Նույնիսկ կարճ ժամկետով իր քաղաքացիության երկիր կամավոր այցելելը ենթադրում է, որ անձն այլևս այդ երկրում հերապանդումների երկյուղ չունի:

Գ) Այցի նպատակը իր մտերիմ ազգականներին փեսակցելն է – սխալ է: Որպես կանոն ազգականներին փեսակցելու ցանկությունը բավարար չէ, որպեսզի անձը անփեսի հերապանդումների երկյուղն ու այցելի իր քաղաքացիության երկիր: Ուստի նման այցը, որպես կանոն, ենթադրում է, որ անձն այլևս նման երկյուղ չունի: Միայն եթե նման այցը պայմանավորված է բացառիկ հանգամանքներով (օրինակ, մահամերձ ծնողին այցելելու անհրաժեշտություն), կարելի է ենթադրել, որ անձը այցը կատարել է հաղթահարելով հերապանդումների իրական երկյուղը, և այցը չի վկայում հերապանդումների երկյուղի բացակայության մասին:

Դ) Այցը պայմանավորված է անձին փեղափոխող օդանավի՝ քաղաքացիության երկրում չնախատեսված վայրէջք կատարելու հետ: – ճիշտ է: Քաղաքացիության երկրում չնախատեսված վայրէջքը կախված չէ անձի կամքից, և չի կարող մեկնաբանվել որպես քաղաքացիության երկրի պաշտպանության կամավոր ու դիտարկյալ ընդունում:

4. Անձը համարվում է իր ծագման երկրում կամավոր վերահաստատված, եթե՝

Ա) Անձն իր միջազգային ճամփորդական փաստաթղթով կարճ ժամկետով այցելել է իր ծագման երկիր: – սխալ է: Առհասարակ կարճաժամկետ այցը, որպես կանոն, չի կարող համարվել վերահաստատում: Վերահաստատումը ենթադրում է փաստացի երկարապես կամ, առնվազն, այնպիսի բնակություն, որի ընթացքում անձն ապրել է «որպես փեղաբնակ», այլ ոչ թե այցելու (օրինակ՝ աշխատել է, վճարել հարկեր և այլն):

Բ) Անձն իր ծագման երկրի անձնագրով կամ ճամփորդական փաստաթղթով կարճ ժամկետով այցելել է իր ծագման երկիր: – սխալ է: Կարճաժամկետ այցը, որպես կանոն, չի կարող համարվել վերահաստատում: Միևնույն ժամանակ ծագման երկրի անձնագրով կամ ճամփորդական փաստաթղթով այցը, որպես կանոն, կհամարվի այդ երկրի պաշտպանության կամավոր ընդունում, որը նույնպես կարգավիճակի դադարեցման հիմք է:

Գ) Անձը երկար ժամանակ փաստացի բնակվել է իր ծագման երկրում – սխալ է: Ծագման երկրում երկարամյակ կացությունը չի կարող ինքնին համարվել վերահաստատման ապացույց, քանի դեռ հիմնավորված չէ, որ այն եղել է կամավոր: Եթե այն անձի կամքից անկախ է եղել (օրինակ՝ անձը կալանավորվել է, կամ ենթարկվել է վթարի ու ստիպված է եղել անցնել սրացիոնար հիվանդանոցային բուժում՝ չունենալով երկրից մեկնելու ողջամիտ ֆիզիկական հնարավորություն), դա չի կարող դիտվել կամավոր վերահաստատում:

Դ) Անձը երկար ժամանակ կամավոր բնակվել է իր ծագման երկրում, կամ այնպեղ անցել է մշտական աշխատանքի: – ճիշտ է: Ծագման երկրում երկարամյակ կամավոր բնակությունը կամ այնպիսի բնակությունը, որի ընթացքում անձն ապրել է «որպես փրկաբերակ», այլ ոչ թե այցելու (օրինակ՝ աշխատել է, վճարել հարկեր և այլն), կհամարվի այդ երկրում կամավոր վերահաստատում:

5. Անձը համարվում է իր նախկին քաղաքացիության երկրի քաղաքացիությունը կամավոր վերաստանձնած, միայն եթե՝

Ա) Նա դիմել և ստացել է այդ երկրի քաղաքացիություն: – սխալ է: Անձը կարող է վերաստանձնել նախկին քաղաքացիությունը ոչ միայն ակտիվ գործողությունների միջոցով, այլև, որոշ դեպքերում, չիրաժարվելով քաղաքացիության ինքնաբերաբար շնորհումից:

Բ) Նա կրկին ստացել է այդ երկրի քաղաքացիությունը իր ակտիվ գործողությունների արդյունքում կամ գիտակցաբար չի հրաժարվել իրեն ինքնաբերաբար շնորհված քաղաքացիությունից: – սխալ է: Անձը կարող է վերաստանձնել նախկին քաղաքացիությունը ոչ միայն ակտիվ գործողությունների միջոցով, այլև չիրաժարվելով քաղաքացիության ինքնաբերաբար շնորհումից, որի մասին նա ակնհայտորեն փեղյակ է եղել: Մակայն եթե անձի կողմից նման հրաժարումը իրավական հետևանքներ չէր առաջացնի (մասնավորապես՝ չէր կանխի քաղաքացիության ինքնաբերաբար շնորհումը), ապա դրանից չիրաժարվելը չի վկայում քաղաքացիությունը կամավոր վերաստանձնելու մասին:

Գ) Նա կրկին ստացել է այդ երկրի քաղաքացիությունը իր ակտիվ գործողությունների արդյունքում կամ, ունենալով նման հնարավորություն, գիտակցաբար չի հրաժարվել իրեն ինքնաբերաբար շնորհված քաղաքացիությունից: – ճիշտ է: Անձը կարող է վերաստանձնել նախկին քաղաքացիությունը ոչ միայն ակտիվ գործողությունների միջոցով, այլև չիրաժարվելով քաղաքացիության ինքնաբերաբար շնորհումից, որի մասին նա ակնհայտորեն փեղյակ է եղել, և որը նա կարող էր մերժել:

Դ) Նա երկարացրել է իր անձնագիրը կամ ստացել է նոր անձնագիր:– սխալ է: Անձնագրի երկարացումը կամ նոր անձնագրի ստացումը ենթադրում է քաղաքացիության առկայություն, ուստի չի կարող ենթադրել քաղաքացիության վերաստանձնում: Միաժամանակ, նման քայլը կհամարվի համապատասխան պաշտպանության կամավոր ընդունում, քանի որ ենթադրում է, որ անձն ապավինում է այդ երկրի պահպանությանը:

6. Անձը համարվում է ՏՏ կամ որևէ այլ պետության քաղաքացիություն ստացած ու այդ պետության պաշտպանությունից օգտվող, եթե՝

Ա) Նա համապատասխան երկրի քաղաքացու հետ ամուսնության արդյունքում օրենքի ուժով ստացել է այդ երկրի քաղաքացիություն: – սխալ է: Ամուսնության ուժով ամուսնու կամ կնոջ երկրի քաղաքացիությունը հաճախ շնորհվում է ինքնաբերաբար, և ինքնին չի ենթադրում, որ անձը դրա արդյունքում փաստացի օգտվում է այդ երկրի պաշտպանությունից:

Բ) Նա համապատասխան երկրի քաղաքացու հետ ամուսնության արդյունքում օրենքի ուժով ստացել է այդ երկրի քաղաքացիություն, և այլևս չի ցանկանում համարվել փախստական: – սխալ է: Ամուսնության ուժով ամուսնու կամ կնոջ երկրի քաղաքացիությունը հաճախ շնորհվում է ինքնաբերաբար, և ինքնին չի ենթադրում, որ անձը դրա արդյունքում փաստացի օգտվում է այդ երկրի պաշտպանությունից: Ինչ վերաբերում է անձի կողմից՝ փախստական համարվել չցանկալանուն, ապա այն փախստականի կարգավիճակի դադարեցման առանձին հիմք է:

Գ) Նա ստացել է համապատասխան երկրի քաղաքացիություն, և իրական կապեր ունի այդ պետության հետ: – ճիշտ է: Երկրի պաշտպանությունից օգտվելը բնորոշվում է այդ երկրի հետ իրական կապեր ունենալով (այդ երկրում բնակություն, աշխատանք, հարկերի վճարում, հյուպատոսական պաշտպանությունից օգտվել և այլն): Ուստի երկրի քաղաքացիության ստացման հետ մեկտեղ այդ երկրի հետ իրական կապի առկայությունը բավարար է, որպեսզի քննարկվող հիմքով փախստականի կարգավիճակը դադարեցվի:

Դ) Նա որևէ հիմքով ստացել է համապատասխան երկրի քաղաքացիություն: – սխալ է: Երկրի քաղաքացիության ստացումը ինքնին չի ենթադրում, որ անձը դրա արդյունքում փաստացի օգտվում է այդ երկրի պաշտպանությունից, և ուստի բավարար չէ, որ քննարկվող հիմքով փախստականի կարգավիճակը դադարեցվի:

7. Փախստականի ծագման երկրում հանգամանքների փոփոխության ուժով փախստականի կարգավիճակը ենթակա է դադարեցման, եթե՝

Ա) Ծագման երկրում փաստացի դադարեցվել են այն հեղապնդումները, որոնց երկյուղի հիման վրա անձին տրամադրվել է փախստականի կարգավիճակ: – սխալ է: Տեղապնդումների կամ բռնության դադարը հաճախ կրում է ժամանակավոր բնույթ, և չի կարող հանգեցնել փախստականի միջազգային պաշտպանության դադարեցման: Դադարեցումը հիմնավորված է այն դեպքում, եթե ծագման երկրի ամբողջ տարածքում հիմնովին վերանում է հեղապնդումների երկյուղի պատճառը:

Բ) Ծագման երկրում հեղապնդումների համար պարասխանատու կառավարությունը հեռացվել է իշխանությունից: – սխալ է: Իշխանափոխությունը հաճախ հեղապնդումների վերացման կարևոր նախադրյալ է: Սակայն հաճախ իշխանափոխությունից հետո երկրում պահպանվում է անկայուն իրավիճակ, և չի կարելի բացառել հեղապնդումների վերսկսման հնարավորությունը:

Գ) Ծագման երկրում տեղի են ունեցել այնպիսի էական ու կայուն փոփոխություններ, որոնց արդյունքում այդ երկրի ամբողջ տարածքում վերանում է հեղապնդումների երկյուղի պատճառը: – ճիշտ է: Եթե ծագման երկրում տեղի են ունենում էական ու կայուն փոփոխություններ, որոնց արդյունքում այդ երկրի ամբողջ տարածքում վերանում է հեղապնդումների երկյուղի պատճառը,

ապա կարելի է եզրակացնել, որ այնպեղ դադարել են գոյություն ունենալ այն հանգամանքները, որոնց պարճառով նա ճանաչվել էր փախսարական: Նման դեպքում կարգավիճակի դադարեցումը կլինի հիմնավորված:

Դ) Ծագման երկրում հասարավել է ընդհանուր անվարանգ մթնոլորտ: – սխալ է: Սոսկ ֆիզիկական անվարանգության վերականգնումը չի նշանակում, որ ճագման երկրում դադարել են գոյություն ունենալ այն հանգամանքները, որոնց պարճառով նա ճանաչվել էր փախսարական: Անհրաժեշտ են ճագման երկրում էական ու կայուն փոփոխություններ, որոնք, անվարանգության վերականգնումից բացի, ենթադրում են գործող պերական և մասնավորապես դարական ու իրավապահ համակարգերի առկայություն, ինչպես նաև անճանց ապրուստի ապահովման համար անհրաժեշտ բազային պայմաններ:

8. Նույնիսկ եթե փախսարականի ճագման երկրում այլևս գոյություն չունեն այն հանգամանքները, որոնց պարճառով նա ճանաչվել էր փախսարական, վերջինս կարող է պահպանել իր կարգավիճակը, եթե՝

Ա) Նախկին հերապնդումը եղել է առանճակի դաժան կամ լայնաճավալ: – սխալ է: Նույնիսկ առավել լուրջ հերապնդումների փաստն ինքն իրենով չի հիմնավորում, որ անճը բավարար հիմքեր ունի չվերադառնալ ճագման երկիր, և պերք է պահպանի իր միջագգային պաշտպանությունը: Օբյեկտիվ հանգամանքներից բացի հարկ է հաշվի առնել նաև սուբյեկտիվ (համապարասխան դեպքերի ազդեցությունը անճի էմոցիոնալ, հոգեբանական կամ ֆիզիկական վիճակի վրա) հանգամանքները: Սա ենթադրում է անճի անճնական հանգամանքների (տարիք, սեռ, մշակույթը սոցիալական փորճ, հոգեբանական առանճահարկություններ և այլն) գնահարում, որոշելու համար, արդյո՞ք նրա համար իսկապես տրավմատիկ կլինի ճագման երկիր վերադառնալը:

Բ) Նա հերապնդման է ենթարկվել դեռահաս տարիքում: – սխալ է: Որպես կանոն դեռահաս տարիքում հերապնդումները առավել տրավմատիկ են լինում անճի համար: Ուստի տարիքը կարևոր գործոն է ճագման երկիր վերադառնալը մերժելու մասին որոշում կայացնելու համար: Սակայն դրա հեր մեկտեղ կարևոր նշանակություն ունեն նաև այլ սուբյեկտիվ հանգամանքները, ինչպես նաև համապարասխան հերապնդումների լրջությունը:

Գ) Նա ենթարկվել է կամ ականապես է եղել առավել լուրջ հերապնդումների, և դրա արդյունքում ստացել է այնպիսի հոգեբանական տրավմա, որի ուժով նրանից ողջամտորեն չի կարող պահանջվել վերադառնալ իր ճագման երկիր: – ճիշտ է: Փախսարականի ճագման երկրում հանգամանքների փոփոխությունը չպերք է հանգեցնի նրա միջագգային պաշտպանության դադարեցմանը, եթե փախսարականը ենթարկվել է կամ ականապես է եղել առավել լուրջ հերապնդումների (օրինակ՝ ենթարկվել է խոշտանգումների, կամ որպես երեխա ականապես է եղել գանգվաճային սպանությունների, հարկապես՝ եթե սպանվել են իր ճնողները կամ մոտ ազգականները), և դրա արդյունքում ստացել է այնպիսի հոգեբանական տրավմա, որի ուժով նրանից ողջամտորեն չի կարող պահանջվել վերադառնալ իր ճագման երկիր:

Դ) Անճը առավել գգայուն է և ճանր հոգեբանական ապրումներ կունենա ճագման երկիր վերադառնալու դեպքում: – սխալ է: Անճի սուբյեկտիվ ընկալումը ինքնին բավարար չէ ճագման երկիր վերադառնալուց նրա հրաժարվելը ողջամիտ ու հիմնավոր համարելու համար: Անհրաժեշտ է նաև,

որպեսզի համապարասխան հոգեբանական ապրումները բխեն ծագման երկրում նախկինում փեղի ունեցած առավել լուրջ հեղափոխումներից:

9. Նշվածներից որը չի հանդիսանում փախստականի կարգավիճակի կամ ապաստանի դադարեցման հիմք՝

Ա) Փախստականը մեկնել է Նայաստանի Նանրապետությունից և իրեն փրկած կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի գործողության ժամկետից հետո գրնվում է Նայաստանի Նանրապետության փարածքից դուրս: – սխալ է: Նույնիսկ առավել լուրջ հեղափոխումների փաստը ինքն իրենով չի հիմնավորում, որ անձը բավարար հիմքեր ունի չվերադառնալ ծագման երկիր, և պետք է պահպանի իր միջազգային պաշտպանությունը: Օբյեկտիվ հանգամանքներից բացի հարկ է հաշվի առնել նաև սուբյեկտիվ (համապարասխան դեպքերի ազդեցությունը անձի էմոցիոնալ, հոգեբանական կամ ֆիզիկական վիճակի վրա) հանգամանքները: Սա ենթադրում է անձի անձնական հանգամանքների (փարիք, սեռ, մշակույթը սոցիալական փորձ, հոգեբանական առանձնահատկություններ և այլն) գնահատում, որոշելու համար, արդյո՞ք նրա համար իսկապես փրավմարտիկ կլինի ծագման երկիր վերադառնալը:

Բ) Անձը փախստական էր ճանաչվել իր ազգականին փախստական ճանաչելու ուժով, և համապարասխան ազգականի կարգավիճակը որևէ հիմքով դադարեցվել է: – սխալ է: Որոշ դեպքերում անձը կարող է ինքնաբերաբար փախստական են ճանաչվել իրենց ազգականին փախստական ճանաչելու ուժով: Նման փախստականի կարգավիճակը ածանցյալ է համապարասխան ազգականի կարգավիճակից, և մեխանիկորեն դադարեցվում է վերջինիս կարգավիճակի դադարեցման պահից: Միաժամանակ, համապարասխան անձը դադարեցումից անմիջապես հետո կարող է ներկայացնել ապաստանի հայց՝ հիմնվելով իր անձնական պարճառների վրա:

Գ) Անձը փախստական էր ճանաչվել իր ազգականին փախստական ճանաչելու ուժով, և համապարասխան ազգականին շնորհվել է ՆՏ քաղաքացիություն: – ճիշտ է: Որպես կանոն փախստականին ՆՏ քաղաքացիության շնորհումը հանգեցնում է նրա կարգավիճակի դադարեցմանը, որի դեպքում դադարում է նաև իր այն ազգականների կարգավիճակը, ով փախստական է ճանաչվել իր՝ փախստական ճանաչվելու ուժով: Սակայն քաղաքացիության սրացման առնչությամբ կարգավիճակի դադարեցումը փեղի չի ունենում ինքնաբերաբար: Ուստի փախստականի կողմից քաղաքացիության սրացումը ինքնին չի նշանակում այն անձանց կարգավիճակի դադարեցում, ում կարգավիճակը ածանցյալ էր իր կարգավիճակից:

Դ) Փախստականը հիմնավոր պարճառներով վրանգավոր է համարվում Նայաստանի Նանրապետության ազգային անվրանգության համար կամ դարապարտվել է առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար: – սխալ է: Այս հիմքը բխում է 1951 թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներից, որոնք թույլ են փախստականի երկրին վրարել այնպիսի փախստականին, ով հիմնավոր պարճառներով վրանգավոր է համարվում այդ երկրի անվրանգության համար, կամ կատարել է առանձնապես ծանր հանցագործություն ու վրանգ է ներկայացնում այդ երկրի հասարակության համար:

10. «Փախստականների և ապաստանի մասին» ՏՏ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ապաստանի դադարեցման հիմքերից որ մեկն է ընդհանուր առմամբ հակասության մեջ մտնում չվերադարձնելիության սկզբունքի հետ՝

Ա) Փախստականը հիմնավոր պարճառներով վրանգավոր է համարվում Ղայաստանի Ղանրապետության ազգային անվրանգության համար: – սխալ է: Ինչպես օրենքով, այնպես էլ 1951 թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ չվերադարձնելիության սկզբունքը չի րարաճքում այն անձանց վրա, որոնք պարճառներով վրանգավոր են համարվում ապաստանի երկրի ազգային անվրանգության համար: Ուսրի այս հիմքի մասով չկա որևէ հակասություն չվերադարձնելիության սկզբունքի հետ:

Բ) Փախստականը դարապարրվել է առանձնապես ծանր հանցագործություն կարարելու համար: – սխալ է: Օրենքի, ինչպես նաև 1951 թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն չվերադարձնելիության սկզբունքը չի րարաճքում այն անձանց վրա, որոնք ուժի մեջ մրաճ վճռով առանձնապես ծանր հանցագործություն կարարելու համար: Ուսրի ապաստանի դադարեցման այս հիմքի մասով չկա հակասություն չվերադարձնելիության սկզբունքի հետ:

Գ) Փախստականը դարապարրվել է ծանր հանցագործություն կարարելու համար: – ճիշտ է: Ինչպես օրենքով, այնպես էլ 1951 թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվաճ րացառությունները չվերադարձնելիության սկզբունքից չեն ներառում ծանր հանցագործությունների կարարումը: Ըստ Կոնվենցիայի մեկնաբանությունների՝ առանձնակի ծանր բնույթ չունեցող հանցագործությունների առնչությամբ պետք է կիրառել քրեական և քրեադարավարական սովորական գորճընթացներ՝ առանց փախստականի միջազգային պաշտպանության դադարեցման: Ուսրի ապաստանի դադարեցման այս հիմքը որոշ հակասության մեջ է չվերադարձնելիության սկզբունքի հետ:

Դ) ՏՏ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվաճ՝ ապաստանի դադարեցման հիմքերից որ մեկն է ընդհանուր առմամբ հակասության մեջ մտնում չվերադարձնելիության սկզբունքի հետ: – սխալ է: ՏՏ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն փախստականի ապաստանը դադարեցվում է, եթե նա հիմնավոր պարճառներով վրանգավոր է համարվում Ղայաստանի Ղանրապետության ազգային անվրանգության համար կամ դարապարրվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կարարելու համար: Սակայն վերադարձնելիության սկզբունքից առկա րացառությունները չեն ներառում ծանր հանցագործությունների կարարումը: Ուսրի ապաստանի դադարեցման այս հիմքը որոշ հակասության մեջ է չվերադարձնելիության սկզբունքի հետ: